



<<15>>դեկտեմբերի2010թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 137

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ սահմանված կարգով հաշվառված ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների բաշխման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև այդ աշխատանքների թափանցիկությունը ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների վիճակահանությամբ բաշխման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Վարդանյան

ՀՀ քաղաքաշինության նախարար

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Քոչարյան

ՀՀ Լոռու մարզպետ

Լ.Ասլանյան

ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական

Ս.Ղարաքեշիշյան

Ստեփանավանի քաղաքապետ
(համաձայնությամբ)

Ռ.Քոչարյան

Ստեփանավանի քաղաքապետի տեղակալ
(համաձայնությամբ)

Ա.Հովսեփյան

Ստեփանավան համայնքի ավագանու անդամ

Ա.Առաքելյան

Ստեփանավան <<Լոռէ>> փրկարարական
ջոկատ հասարակական կազմակերպության
նախագահ (համաձայնությամբ)

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե.Աթայան

ՀՀ քաղաքաշինության նախարարության
աշխատակազմի բնակարանային ապահովման
բնակարանային ֆոնդի կառավարման և
կոմունալ քաղաքականության վարչության պետ

2. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան